ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՅԱՆՔ ЖИЗНЬ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

(1963 թ. հունվար—հունիս)

Բուլղարիա

Բուլղարիայի Բուրգաս քաղաքի «Երևան» միության մասնաճյուղի թատերախումբը բեմադրել է «Միքայել Նալբանդյան» պիեսը, որը թատերգության է վերածել Կ. Ճոպոյանը։ Վառնայի թատերասերները բեմադրել են Հ. Պարոնյանի «Ատամնաբույժն արևելյան» պիեսը։ Մյուս քաղաքների հայկական թատերախմբերը ևս իրականացրել են մի շարք նոր բեմադրություններ։

(«Երևան», Սոֆիա)

* * *

«Նարոդնա կուլտուրա» շաբաթաթերթը հատուկ հոդված է նվիրել բուլղարահայ կոմպոզիտոր Ա. Բերբերյանին։ Երիտասարդ կոմպոզիտորը հայտնի է դարձել մի շարք երգերով և վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություններով։ Նրա «Իապսոդային բալլադը» դաշնամուրի և նվագախմբի համար, որը նվիրված է Սովետական Հայաստանի 40-ամյակին, մտնում է պետական սիմֆոնիկ նվագախմբի հայտագրի մեջ։ Ա. Բերբերյանը այժմ աշխատում է «Սիմֆոնիա-պոեմ» վրա, որը նվիրված է Բուլղարիայի 1923 թ. սեպտեմբերյան ապստամբության 40-ամյակին։ Միաժամանակ նա գրում է «Օդը պայծառ պետք է լինի» օպերան։ Ա. Բերբերյանը ղեկավարում է Վառնայի «Երևան» միության մասնաճյուղի նորաստեղծ երգի ու պարի անսամբլը, որը կազմված է 70-ից ավելի երգողներից ու պարողներից։

(«Երևան», Սոֆիա)

* * *

Մկրտիչ Արմենի «Հեղնար աղբյուր» վիպակը բուլղարական պետական հրատարակչության կողմից լույս է ընծայվել թուրքերեն լեզվով։ Թարգմանությունը կատարել է «Երևան» թերթի աշխատակից Ս. Փաշաճյանը։

(«Երևան», Սոֆիա)

Ռումինիա

Բուխարեստի երիտասարդական հրատարակչությունը «Ամենագեղեցիկ բանաստեղծություններ» մատենաշարով լույս է ընծայել հայ միջնադարի մեծ քնարերգու Նահապետ Քուչակի բանաստեղծությունների հատորը։ Քուչակի 100 բանաստեղծություններ ռումիներեն են թարգմանել ռումին գրողներ Վիկտոր Թուլպուրեն և Տան Տեշլիուն, որոնք Քուչակին համարում են «աշխարհի մեծագույն քնարերգուներեն մեկը»։

(«Նոր կյանք», Բուխարեստ)

Լիբանան

Լիբանանում «Ուրարտու» հրատարակչությունը լույս է ընծայել «Սփյուռքահայ ալբոմի» առաջին հատորի Ա դիրքը, որը նվիրված է Լիբանանի հայ գաղութին։ Խոսելով գաղութի ծագման մասին, Հ. Նազարեանը այն կարծիքն է հայանում, որ հայերը, մասնավորապես Բեյրութում, հիմնավորվել են 1700 թվականին։ Հեղինակը մանրամասն տեղեկություններ է տալիս Լիբանանի հայության պատմությունից, խոսում նշանավոր լիբանանահայերի մասին, պատմում գաղութի կրթական, մշակութային, մարզական, առողջապահական կյանքի, մամուլի մասին։ Ալբոմի ամբողջ առաջին հատորը նվիրվելու է Մերձավոր և Միջին Արևելքի հայաբնակ վայրերին, երկրորդ հատորը՝ Եվրոպայի և Ավստրալիայի, երրորդը՝ Հյուսիսային և Հարավային Ամերիկայի գաղութներին, իսկ չորրորդ հատորը կնվիրվի 1916—1960 թթ. վախճանված սփյուռքահայ նշանավոր դեմքերին։

(«Այդ», Բեյրութ)

* * *

Վերջերս Իտալիայի Ռեժիո էլիայի մրցանակաբաշխությանը մասնակցած 70 երգիչներից հինգը արժանացել են ոսկե մեդալի։ Լիբանանահայ շնորհալի երգչուհի Սեդա Բալայանը

նույնպես ոսկե մեդալ է նվաճել և միաժամանակ արժանացել «Առաջիններից առաջիններ» տիտղոսին։

(«Արարատ», Բեյրութ)

ԱՅՈ

Կահիրեի հայ գեղարվեստասիրաց միության թատերախումբը ներկայացրել է Ա. Կասոնայի «Ծառերը կանգնած են մահանում» պիեսը, որը բեմադրել է Վահե Բոյաճյանը։ «Արև» թերթը հատկապես նշում է Այծեմիկ Բոյաճյանի խաղը, որը հանդես է եկել տատիկի դերում։

(«Արև», Կահիրե)

Բելգիա

Հայտնի եգիպտագետ Արրակ Մխիթարյանը 1962 թ. Սովետական Հայաստան կատարած այցելությունից Բելգիա վերադառնալուց հետո տեղի հայկական շրջանների համար ընդարձակ զեկուցում է կարդացել Հայաստանի հնագարյան եկեղեցիների ճարտարապետության վերաբերյալ, միաժամանակ ցուցադրելով բազմաթիվ գունավոր լուսանկարներ։ Նույն զեկուցումը նա կրկնել է Գեղարվեստի թանգարանում։ Ա. Մխիթարյանը պրոֆ. Հաների Գրեգուարի հրավերով բանախոսել է նաև «Ֆոնտասիոն Յունիվերսիթեր»-ի մեջ։

(«Երիտասարդ Հայաստան», Նյու-Յորք)

Ֆրանսիա

Ամեն տարի Սորբոնի համալսարանում կազմակերպվում է «Ժողովուրդները երգում են» տոնահանդեսը, որին իրենց ազգային տարազներով մասնակցում են տարբեր ազգերի ուսանողներ, ցուցադրելով իրենց երգերն ու պարերը։ Այս տարվա գարնանը տեղի ունեցավ 17-րդ տոնահանդեսը, որի նախաձեռնողներն ու կազմակերպիչներն էին Հ. և Ա. Թորոսյան քույրերը։ Բազմաթիվ ազգերի ներկայացուցիչների հետ իրենց արվեստը ցուցադրեցին նաև ֆրանսահայ երիտասարդները։ Հանդիսականները ջերմորեն ընդունեցին Սերի Մուրադ Ռաֆայելյան վարժարանի 100 մարդուց բաղկացած երգչախմբի ելույթը։ «Սոսի» պարախումբը «Արմենիա» նվագախմբի ընկերակցությամբ ցուցադրեց աղջիկների և տղաների հայկական պարեր։

(«Աշխարհ», Փարիզ)

* * *

Ֆրանսիայի անվանի դրամատուրգ, ծագումով հայ Արթուր Ադամովի նոր գործը՝ «71-ի գարունը» ներկայացվել է Սեն Դենի քաղաքի «Ժերար Ֆիլիպ» թատրոնում։ Պիեսը նվիրված է Փարիզի Կոմունայի դեպքերին։ Թատերախումբը պատրաստվում է այդ ներկայացումով հյուրախաղերի մեկնել Բելգիա, Շվեյցարիա և այլ երկրներ։

(«Աշխարհ», Փարիզ)

Թուրքիա

Երկար տարիներ Գերմանիայում ապրող տաղանդավոր դաշնակահարուհի Մարիա Գալեմքերյանը այցելել է Ստամբուլ և երկու համերգ տվել։ Նա հանդես է եկել նաև Մխիթարյան Սանուց միությունում։ Անցյալում դաշնակահարուհին, որպես նվագակցող, հռչակավոր ռուս երգիչ Ֆ. Շալյապինի հետ շրջագայել է Եվրոպայի բազմաթիվ երկրներում։

(«Աշխարհ», Փարիզ)

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ամերիկայի դմյուռնահայ միության նախաձեռնությամբ հրատարակվել է «Հուշամատյան ալբոմ»՝ նվիրված Զմյուռնիայի հայկական գաղութին։ Հրատարակությունը բաղկացած է 208 էջից, ունի 300-ից ավելի լուսանկարներ։ Ալբոմում տեղ գտած նյութերը ծանոթացնում են Զմյուռնիայի հայ գաղութի կրթական, մշակութային, մարզական և այլ կազմակերպությունների կյանքին։ Գաղութի պատմությանն է նվիրված վաստակավոր ուսուցիչ Սարգիս Ամատյանի հոդվածը, որտեղ տրված է գաղութի անցած ամբողջ ուղին՝ նրա սկզբնավորումից մինչև 1922 թ.։

(«Լրարեր», Նյու-Յորք)

* * *

Ամերիկահայ առաջադիմական միության Նյու-Յորքի քաղաքային վարչության նախաձեռնությամբ կազմակերպվել է երեկույթ՝ նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին։ Ընդարձակ դասախոսությամբ հանդես է եկել Հ. Սանսիվասը, որը ունկնդիրներին հանգամանորեն ծանոթացրել է Սայաթ-Նովայի կյանքին ու ստեղծագործությանը։ Երեկոյին Սայաթ-Նովայի երգերի կատարումով հանդես է եկել երգչուհի Սյուզան Սիմոնեն։

(«Լրարեր», Նյու-Յորք)

* * *

Վիլյամ Սարոյանը «Նյու-Յորք Թայմս» թերթի թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ հայտնել է, որ մտադիր է Նյու-Յորքում բեմադրել իր «Աղջիկները» նոր թատերգությունը։ Նա նշել է, որ իր այս գործը նման չէ մյուսներին, և շատերը չեն հավատա, որ դա ինքն է գրել։ Վ. Սարոյանը հայտնել է, որ այժմ ինքը պատրաստել է և գրում է նոր պիեսներ ու կարճ թատերգություններ։

(«Արև», Կահիրե)

* * *

Լոս-Անժելոսի թատերասրահներից մեկում 1000 հանդիսատեսի ներկայությամբ տեղի է ունեցել հայ երաժշտության մեծ համերգ։ Եղույթ է ունեցել տեղի 75 հոգուց կազմված հայկական քառաձայն երգչախումբը՝ ճանաչված երգչուհի Զարուհի Վարդյանի ղեկավարությամբ։ Խումբը կատարել է Եկմալյանի, Կոմիտասի, Հենդելի, Կարա-Մուրզայի, Սարյանի, Բերբերյանի և ուրիշների գործերը։ Համերգին մասնակցել են տեղի օպերային թատրոնի մենակատարներ Ժակլին Շահբազյանը և Լևոն Փարթամյանը, ինչպես նաև երգչուհիներ Սյուզան Նազարյանը, Լուսի Աղաբաբյանը, Լուիզ Մկրտչյանը։ Ջերմ ընդունելության է արժանացել տաղանդավոր ջութակահար Վարուժան Քոճյանը, որը ներկայումս Հարավային Կալիֆորնիայի համալսարանում աշակերտում է հռչակավոր ջութակահար Յաշա Հայֆեցին։ Լ. Քոճյանը բիբլիոֆիլ է, նա բազմաթիվ համերգներով հանդես է եկել Միջին Արևելքի ու Եվրոպայի քաղաքներում, շահել է մի շարք մրցանակներ, եղել է Հռոմի Սանտա Չեչիլիա նվագախմբի գլխավոր մենակատարը՝ 1957 թ. Բաալբեկի միջազգային տոնախմբության ժամանակ։

(«Նոր օր», Ֆրեզնո)

* * *

Հայտնի է, որ Հարվարդի համալսարանում գործում է հայագիտական ամբիոն։ Այժմ մի խումբ հայերի նախաձեռնությամբ միջոցներ են ձեռք առնվում՝ Կալիֆորնիայի (Լոս-Անժելոսի) համալսարանում ևս հայագիտական ամբիոն ստեղծելու ուղղությամբ։

(«Նոր օր», Ֆրեզնո)

Արգենտինա

Արգենտինայի Ավեժանետա քաղաքի սիմֆոնիկ նվագախումբը Խոզե Ռոդրիգես Ֆորի ղեկավարությամբ տվեց 1963 թ. դասական համերգաշարի իր առաջին համերգը, որի ժամանակ Մոցարտի և Լիստի ստեղծագործությունների հետ միասին առաջին անգամ կատարվեց նաև սովետահայ կոմպոզիտոր Ջիվան Տեր-Թադևոսյանի «Լիրիկական պոեմը»։ Կոմպոզիտորի կենսագրական և ստեղծագործական նկարագիրը տվեց դաշնակահարուհի Անթառամ Ահարոնյանը։

(«Սևան», Բուենոս-Այրես)

Անգլիա

Լոնդոնի Հայ երիտասարդաց միությունը կազմակերպել է գեղարվեստական հավաքույթ։ Բեյրութի «Համազգային» թատերախմբի անդամ Վարուժան Խրտրշյանի ղեկավարությամբ բեմադրվել են երեք հատվածներ Հ. Պարոնյանի «Քաղաքակրթության վնասներ»-ից։ Եղույթ է ունեցել միության երգչախումբը՝ Բաֆֆի Արմենյանի ղեկավարությամբ։ Նույն երգչախումբը հայկական երգերի կատարումով հանդես է եկել Լոնդոնի «Կայսերական ճեմարանի» ուսանողական միության կազմակերպած հանդեսում։

(«Զարթոնք», Բեյրութ)

* *

Լոնդոնի Քովենտ Գարդընի հռչակավոր պարուհի Մ. Ֆոնտենը Բուդապեշտի օպերայի արվեստագետ Վիկտոր Ռոնա Բալիովայի հետ մեծ հաջողությամբ բեմադրել է Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետը։

(«Արարատ», Բեյրութ)

Վ. ԵՐԿԱՆՅԱՆ